ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-------» ---------- 2016թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի Հ. 468-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 5-րդ մասով, 72-րդ հոդվածով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին» հ.468-Ա որոշման հավելվածի 4-րդ և 5-րդ այունակները ճանաչել ուժը կորցրած։

2. Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին» հ.468-Ա որոշման հավելվածի 49-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ, 54-րդ և 55-րդ տողերի 2-րդ այունակի «Երևանի հ.51 մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Երևանի հ.52 մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Երևանի հ.53 մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Երևանի հ.54 մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Երևանի հ.55 մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Երևանի հ.56 մանկապարտեզ» ՀՈԱԿ և «Երևանի հ.57 մանկապարտեզ» ՀՈԱԿ բառերը փոխարինել ««Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ» բառերով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի Հ.468-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի հ.468-Ա որոշմամբ՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող թվով 151 գույքերն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվել է նախադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին։

Որոշման ընդունումը պայմանավորված է եղել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի արդյունավետ կառավարման նպատակով Երևան համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերը և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը կազմակերպություններին ամրացնելու անհրաժեշտությամբ։

Նկատի ունենալով, որ Ավան վարչական շրջանում գտնվող նախադպրոցական ուսումնական հաստատությունները վերակազմակերպվել և գործում են մեկ իրավաբանական անձի պետական գրանցման վկայականով, ապա անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին» հ.468-Ա որոշման հավելվածի 49-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ, 54-րդ և 55-րդ տողերում կատարել համապատասխան փոփոխություններ, ինչը հնարավորություն կտա նախադպրոցական ուսումնական հաստատություններին իրականացնելու պետական գրանցման աշխատանքները։

Քննարկվող որոշման հավելվածի 4-րդ և 5-րդ սյունակների ուժը կորցրած ճանաչելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրավունքի պետական գրանցման աշխատանքների իրականացման ժամանակ ի հայտ են գալիս դեպքեր, երբ նախկինում երկրաչափական եղանակով կատարված չափագրման հիման վրա տրամադրված սեփականության իրավունքի գրանցման վկայականում ամրագրված մակերեսների և ներկայումս փաստացի առկա մակերեսների միջև առաջանում է որոշակի անհամապատասխանություն, ինչի պարագայում, ՀՀ գործող օրենսդրության համաձայն, առաջանում է անհրաժեշտություն իրականացնելու համապատասխան որակավորում ունեցող մասնագետի չափագրման (այդ թվում նաև ներքին չափագրման) աշխատանքներ։

Հաշվի առնելով վերոգրյալը ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի հ.468-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի Հ.468-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի հ.468-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի Հ.468-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի հ.468-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ